

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Մարտի 31-ին, երեքշաբթի օրը, Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի դահլիճում, ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր նախագահությամբ, գումարվում է Սուրբ Աթոռի Միաբանական Ընդհանուր Ժողով, որտեղ լուսարարապետ է ընտրվում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմական առաջնորդ Տ. Գարեգին արքեպ. Գազանճյանը՝ ի տեղի նորոգ հանգուցյալ Տ. Հայրիկ արքեպ. Ասլանյանի, որը մահացել էր այս տարի, փետրվարի 23-ին, Երուսաղեմում:

Ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը Սուրբ Աթոռի նորընտիր լուսարարապետի ընտրությունը հեռագրով հաղորդում է Վեհափառ Հայրապետին:

Նորին Սուրբ Օծությունը մայիսի 15-ին Փարիզից, որտեղ գտնվում էր հովվապետական այցելությամբ, Տ. Եղիշե սրբազան պատրիարքին այս առթիվ ուղարկում է հետևյալ շնորհավորական հեռագիրը.

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

Երուսաղեմ, հայոց Պատրիարքարան

Սրտանց կշնորհավորենք ընտրությունը Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանին իբրև լուսարարապետ Սուրբ Աթոռիդ:

Հաճեցեք փոխանցել սրբազանին Մեր ամենաջերմ մաղթանքները արևշատության և անսպառ կորով՝ նվիրված Առաքելական Աթոռիդ պայծառության, ի փառս մեր Մայր Եկեղեցվո:

Եղբայրական սիրո ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Փարիզ,
15 մայիսի 1981 թ.